Պատվաստանյութեր
հղի անձանց համար





Եթե Դուք հղի եք, պատվաստանյութերը կարող են և Ձեզ, և Ձեր երեխային պաշտպանել կանխարգելվող հիվանդություններից: Պատվաստանյութերը սովորեցնում են Ձեր մարմնին ճանաչել վնասակար վիրուսները կամ բակտերիաները և ստեղծել հատուկ հակամարմիններ՝ Ձեզ և Ձեր երեխային առողջ պահելու համար: Երբ հղիության ընթացքում Դուք պատվաստվում եք, Ձեր հակամարմիններից որոշները մինչև ծնունդը փոխանցվում են Ձեր երեխային: Այս հակամարմինները Ձեր երեխայի համար ապահովում են պաշտպանություն ծանր հիվանդություններից կյանքի առաջին մի քանի ամիսների ընթացքում:

Դուք պետք է իմանաք՝

- Պատվաստանյութերը հղիության ընթացքում անվտանգ են հղիների և նրանց երեխաների համար:
- Հղիության ընթացքում պատվաստվելը լավագույն միջոցն է նորածիններին լուրջ հիվանդություններից պաշտպանելու համար, հատկապես քանի որ նրանք դեռևս չեն կարող պատվաստվել:

Պատվաստանյութեր, որոնք անհարժեշտ են հղիության ընթացքում

Փայտացման, դիֆթերիայի, կապույտ հազի (Tdap) դեմ պատվաստանյութ՝

- Ստացեք Tdap պատվաստանյութը <u>յուրաքանչյուր հղիության</u> 27-36-րդ շաբաթների ընթացքում՝ Ձեր երեխային կապույտ հազից պաշտպանելու համար:
- Կապույտ հազը հատկապես ծանր է նորածինների մոտ և կարող է կյանքի համար վտանգավոր լինել:

COVID-19-ի դեմ պատվաստանյութ՝

- COVID-19-ի դեմ պատվաստվելը Ձեզ համար անվտանգ է հղիության ցանկացած պահին:
- Հղիներն ավելի հավանական է, որ ծանր կհիվանդանան COVID-19-ով, քան ոչ հղիները:
- COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութ ստանալն ապահովում է Ձեր նորածնի պաշտպանությունը կյանքի առաջին ամիսների ընթացքում, մինչև որ 6 ամսականում Ձեր երեխան կկարողանա ինքը ստանալ COVID-19-ի դեմ իր պատվաստանյութը:
- Հղիները պետք է սպասեն առնվազն 2 ամիս COVID-19-ի դեմ ցանկացած պատվաստանյութի վերջին դեղաչափից հետո՝ նախքան COVID-19 դեմ թարմացված պատվաստանյութի դեղաչափ ստանալը:

Շնչառական սինցիտիալ վիրուսի (RSV) դեմ պատվաստանյութ՝

- Հղիները սեպտեմբերից մինչև հունվար կարող են ստանալ շնչառական սինցիտիալ վիրուսի դեմ պատվաստանյութի (RSV) մեկ դեղաչափ՝ հղիության 32-36-րդ շաբաթների ընթացքում՝ նորածնին շնչառական սինցիտիալ վիրուսից պաշտպանելու համար: RSV-ին երեխաների մոտ կարող է առաջացնել բրոնխիոլիտ և թոքաբորբ:
- Նորածինների մոտ RSV-ի ծանր հիվանդությունը կանխելու համար խորհուրդ է տրվում RSV սեզոնին կա՛մ հղիության ընթացքում մոր պատվաստում RSV պատվաստանյութով, կա՛մ ծնվելուց անմիջապես հետո նորածնի պատվաստում nirsevimab-ով:

Նորածինների մեծ մասը չի ունենա երկուսի կարիքը:

County of Los Angeles Public Health

Պատվաստանյութեր
հղի անձանց համար



Գրիպի դեմ պատվաստանյութ՝

- Գրիպի դեմ պատվաստվելն անվտանգ է հղիության ցանկացած պահին:
- Հղի անձինք ավելի հավանական է, որ գրիպով ծանր կհիվանդանան:
- Այլ տարիքային խմբերի երեխաների համեմատ՝ 6 ամսականից փոքր երեխաների համար գրիպի պատճառով հոսպիտալացվելու վտանգն ամենամեծն է:
- Ժամանակին գրիպի դեմ պատվաստվելը ապահովում է պաշտպանություն Ձեզ համար, ինչպես նաև կյանքի առաջին ամիսներին Ձեր նորածնի համար, մինչև որ Ձեր երեխան կկարողանա ինքը ստանալ գրիպի դեմ իր պատվաստանյութը:

Հեպատիտ Բ-ի դեմ պատվաստանյութ՝

Հղի անձինք, ովքեր նախկինում չեն պատվաստվել հեպատիտ Բ-ի դեմ, պետք է հղիության ընթացքում ստանան հեպատիտ Բ-ի դեմ պատվաստանյութ, որպեսզի իրենց և իրենց երեխային պաշտպանեն հեպատիտ Բ վիրուսից առաջացող վարակներից և հիվանդություններից: Հեպատիտ Բ-ն կարող է երկարատև վնաս պատճառել լյարդին:

Պատվաստանյութեր, որոնք անհրաժեշտ են նորածնին ծննդի պահին

Հեպատիտ Բ-ի դեմ պատվաստանյութ՝

- Ձեր նորածինը պետք է ստանա հեպատիտ Բ-ի դեմ պատվաստանյութի առաջին դեղաչափը ծնվելուց հետո 24 ժամվա ընթացքում, որպեսզի պաշտպանվի հեպատիտ Բ-ի վարակից:

Շնչառական սինցիտիալ վիրուսի (RSV) դեմ ներարկում (Nirsevimab)՝

- Եթե դուք չեք պատվաստվել շնչառական սինցիտիալ վիրուսի (RSV) դեմ պատվաստանյութով հղիության ընթացքում, կամ եթե Ձեր երեխան ծնվել է RSV-ի դեմ ձեր պատվաստումից հետո 14 օրվա ընթացքում, Ձեր նորածինը պետք է ստանա nirsevimab-ի (նիրսևիմաբ) մեկ դեղաչափ RSV-ի սեզոնից առաջ կամ դրա ընթացքում, որպեսզի պաշտպանվի ծանր հիվանդանալուց: Շնչառական սինցիտիալ վիրուսը նորածինների շրջանում հոսպիտալացումների ամենատարածված պատճառն է:

Ձեր երեխան կստանա նաև հակաբիոտիկ աչքի կաթիլներ՝ աչքի վարակները կանխելու համար, կարվի վիտամին K-ի ներարկում և արյան պարզ թեստ՝ նորածնի ստուգման համար: Եթե հարցեր ունեք, դիմեք Ձեր հղիության խնամքի մատակարարին:

Հանրային Առողջության զանգերի կենտրոն

Հավելյալ տեղեկությունների համար Հանրային Առողջության զանգերի կենտրոնը հասանելի է **1-833-540-0473** հեռախոսահամարով ամեն օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8-ը՝ շաբաթը յոթ օր:

County of Los Angeles Public Health